



Մենք և Մեր Իրազուցվածները

«Արժանապատվություն և
արդարություն բոլորին»

«Չանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունը, մտահոգված լինելով **ԼԳԲՏ*** անձանց նկատմամբ խտրական և անհանդուրժող վերաբերմունքի բացասական հետևանքներով, նախաձեռնել է ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացում: Այն հնարավորություն է ընձեռել ստանալու ստույգ տեղեկատվություն մեր երկրում **ԼԳԲՏ** անձանց իրավունքների ոտնահարման դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև օրենսդրական դաշտի վերլուծության միջոցով փորձ է կատարվել պարզելու՝ որքանով է իրավական դաշտը երաշխավորում մեր երկրի քաղաքացի համարվող **ԼԳԲՏ** անձանց պաշտպանությունը:

Անձը չի կարող իրեն զգալ տվյալ պետության լիիրավ քաղաքացի այն պարագայում, երբ տվյալ անհատի իրավունքները ոտնահարվում են հասարակության կողմից խարանի և խտրականության արդյունքում:

Ինչպիսին էլ որ լինի մարդու սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, այն պահանջում է հարգալից, հանդուրժողական վերաբերմունք, ինչպես նաև սեռական բազմազանությունը որպես այդպիսին ընդունելու կարիք, որոշ դեպքերում՝ մասնագիտական խնամք և աջակցություն: Կարևոր է նաև պետության հստակ մոտեցումը, որը ֆիքսված կլինի համապատասխան իրավական ակտերում և կերաշխավորի **ԼԳԲՏ** անձանց պաշտպանվածությունը, կարգելի

* **ԼԳԲՏ** – լեսբուհի (կին նույնասեռական), գեյ (տղամարդ նույնասեռական), բիսեքսուալ (երկսեռական), տրանսգենդեր (գենդերափոխ)



նրանց նկատմամբ խտրական և անհարգալից մոտեցումը:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ նույնասեռականների, երկսեռականների ու գենդերափոխների հանդեպ խտրական վերաբերմունքը սկսվում է ընտանիքից: Ընտանիքի անդամների կողմից նրանց հանդեպ խտրականությունը դրսևորվում է շփումների դադարեցմամբ, տնից դուրս հանելով, նրանցից հրաժարվելով: Այնուհետև խտրականությունը շարունակվում է կյանքի գրեթե բոլոր փուլերում ու իրավիճակներում՝ ուսում և աշխատանք, զինվորական ծառայություն, առողջապահություն և այլ ծառայությունների ստացում, ՁԼՄ-ներ, ժամանց և այլն: Քիչ չեն գաղտնիության և անանունության սկզբունքի խախտման դեպքերը, որոնք ավելի հաճախ հանդիպում են առողջապահական և հոգեբանական աջակցության տրամադրման հիմնարկներում, իրավապահ մարմիններում կամ զինկոմիսարիատներում:

ԼԳԲՏ անձիք իրենց իրավունքները չեն առանձնացնում այլոց իրավունքներից, ընդհակառակը, քննադատում են տարբերական ցանկացած փորձ: Այս առնչությամբ նշում են հետևյալ կարևոր հանգամանքները, որ իրենք իրավունք ունեն

- հասարակությունից մեկուսացված և օտարված չլինելու
- ծաղրի չենթարկվելու
- չհետապնդվելու
- չհալածվելու
- ընդունված լինելու

**Ապրել ոչ թե այնպես, ինչպես հարկադրված են,
այլ այնպես, ինչպես իրենք կան:**

ԼԳԲՏ անձանց հանդեպ անհանդուրժողականությունն ավելի շուտ հենվում է չգրված նորմերի, ավանդույթների, սոցիալական հիշողության վրա:


Չարցվողների կարծիքով

**խտրականության նվազեցմանը կարելի է հաս-
նել իրազեկման և կրթության ճանապարհով:**

Ըստ հարցվածների՝ Չայաստանում լինում են ԼԳԲՏ անձանց բռնաբարության և անգամ սպանության դեպքեր: Չարցվողների մեծամասնությունը նշում է, որ երբևիցե չի դիմել ու չի դիմի ոստիկանությանը / իրավապահ մարմին-
ներին իր իրավունքների պաշտպանության առնչությամբ,
քանի որ վերջիններս ոչ միայն չեն լուծում ծագած
խնդիրները, այլ նաև իրենք են պատճառ հանդիսանում նոր
խնդիրների առաջացման:

Իրականում հարցվածներից ոմանք գտնում են, որ այսպես թե այնպես, պետք է հաշվի նստել այն հասարակության հետ, որում ապրում են, հարգել հասարակության մեջ առկա նորմերը և կանոնները և դրսևորել հարմար-
վողականություն: Այնուամենայնիվ հարկ է նաև նշել, որ հասարակությունը և պետությունը պետք է հաշվի առնի իր քաղաքացիների ազատ դրսևորվելու և առանց ուրիշների իրավունքները ոտնահարելու՝ կյանք վարելու անձի իրա-





վունքը: Սակայն որքան ավելի է անձի արտաքինը կամ պահվածքը բացահայտում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, այնքան ավելի լուրջ մասշտաբների կարող է հասնել խտրականության արտահայտումը: Այն կարող է դրսևորվել վիրավորական խոսքերի հնչեցմամբ տվյալ անձի հասցեին, անգամ նաև ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնության գործադրմամբ:

Խտրականությունից պաշտպանված չլինելը (բացահայտվելու վտանգը, անոթի և վախի զգացումները) երբեմն կարող է վտանգել LGBS անձի առողջությունը, օրինակ՝ բժշկական ծառայության դիմելիս:

Հարցվածներից ոմանք ունեցել են ինքնասպանության եթե ոչ փորձ, ապա գոնե մտքեր: Իրավիճակից դուրս գալու համար նրանք խուսափում են դիմել մասնագիտական աջակցության վստահության պակասի պատճառով (անանունությունը և գաղտնիությունը չպահպանելու վախ):

Իրավական վերլուծության շրջանակներում ուսումնասիրվել է LGBS իրավունքների պաշտպանությանն ուղղված, հասարակության մեջ հանդուրժողականության տարածման և նրանց նկատմամբ բոլոր ձևերի խտրականության վերացումը կարգավորող կամ դրան առնչվող օրենսդրական դաշտը և միջազգային փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքներից կարելի է հանգել այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունում LGBS անձանց իրավունքների պաշտպանությանը առնչվող ոլորտը կարգավորող իրավական դաշտը ոչ միայն միասնականացված չէ,

այլև օրենսդրական դաշտում բացակայում են հասկացության սահմանումների օրենսդրական բնորոշումները և ոլորտի առնչությամբ օրենսդրական ամրագրումը, որը կերաշխավորի նրանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը:

Բարենպաստ իրավական կարգավորման տեսակետից հատկապես կարևոր է ուշադրություն հրավիրել հետևյալ խնդիրներին.

Անհրաժեշտ է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականության բոլոր ձևերն արգելող և գենդերային ինքնության ճանաչման վերաբերյալ օրենքի ընդունում:

Անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ օրենսդրական դաշտում կատարվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնք կապահովեն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ենթարկելու, ատելություն քարոզելու կանխարգելումը և ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությունը:



Ըստ հարցվածների՝ անհրաժեշտ է,

մի կողմից, իրականացնել օրենսդրական բարեփոխումներ և հետևել դրանց իրականացման ընթացքին,

մյուս կողմից, աշխատանքներ տանել տարբեր ոլորտներում և մակարդակներում մարդկանց մտածելակերպի փոփոխության ուղղությամբ,

որոնք կնպաստեն

մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի բարձրացմանը,

հանդուրժողականության սերմանմանը,

ինչպես նաև կհանդիսանա դրական քայլ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման գործընթացում:

«Մենք և մեր իրավունքները» իրավական վերլուծության և սոցիոլոգիական հետազոտության ամբողջական արդյունքները հասանելի են էլեկտրոնային տարբերակով «Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք» ՀԿ պաշտոնական կայքում <http://www.pinkarmenia.org>



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



COUNTERPART



CIVIC ADVOCACY
SUPPORT PROGRAM - ARMENIA



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում «Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք» ՀԿ-ի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք» ՀԿ-ի պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

Տպագրվել է «Մենք և Մեր Իրավունքները» ծրագրի շրջանակներում կատարված իրավական վերլուծության և սոցիոլոգիական հետազոտության արդյունքների հիման վրա: